

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բազմավէպ», մարտ: Հան-
դուցեալ Հ. Գարեգին վ. Զարրհա-
նալեանի կենսագրականից իմա-
նում ենք որ նա ծնուել է 1827
թուին. նա 10 տարեկան հասակում
Պօլսից գնացել է Վենետիկի Մխ.
վանքը. այդտեղ ուսում առել և
ապա դառել Մխիթ. միաբանու-
թեան անդամ: Նա 1850-ին վանքի
դպրոցում ուսուցիչ է կարգուել: «Իր
Պետին և մեծերուն միշտ կոչը հը-
պատակ մը ֆնացել է նոյն իսկ ա-
մենէն չնչին իրաց և զիպաց
մէջ»: Վանքում վարել է տնտեսի,
տպարանապետի, վերակացութեան,
քարտուղարի, հիւրընկալի և այլ
զանազան պաշտօններ: 1858 թուին
ուղարկուել է Պօլիս իբրև Պերայի
Մխիթարեան վարժարանի ուսուցիչ
և կաթողիկ հայերի հովիւ: Նա Հա-
սոնի զիպլոմատ «Թիկունքն էր»:
1869-ին Գեր. Հիւրմուզեանի հետ
գնում է Հոմ Վատիկանի ժողովի
համար: Պարիզի պաշարման ժամա-
նակ հ. Զարրհանալեանը զոհուում է
այդ քաղաքում, ուր Մխիթարեան
միաբանութիւնից ուղարկուած էր՝
Մուրադեան վարժարանը ծախելու
նպատակով: 1875-ին գնում է Տա-
րիս և Լրիմ իբրև Մխիթ. միաբա-
նութեան այցելու: Գրական դար-
գացման վրայ ազդեցութիւն է ու-
նեցել նրա ուսուչ. Գաբ. Ալվազով-
սկին: Զարրհանալեանը 1856-ին հը-
րատարակել է իր գրական աշխատու-
թեան անդրանիկ գործը՝ «Յունաց,
Հոռոմայեցոց և Եկեղեցական հարց
Մատենագրութեան պատմութիւնը»:

1874-ին «Արեւմտեան միջին և նոր
դարերումէջ պարած հանճարեղ մա-
տենագրաց վարքը». 1865-ին հը-
րատարակում է «Պատմութիւն հին
հայ Դպրութեանց» գիրքը: 1878-ին
«Ազգային նոր մատենագրութեան
պատմութիւնը». 1883-ին հրատարա-
կում է «Հայկական մատենագրու-
թիւն»-ը, «1565—1883 դարերու շըր-
ջանին մէջ հայ տպարաններէն լոյս
տեսած ամեն գրքերուն ցանկն, յի-
շելով անոնց հեղինակները և ուր
տպուելին»: 1889 թուին «Պատմու-
թիւն հայ թարգմանութեան» եր-
կասիրութիւնը Գ. Զարրհանալեանը
աշխատակցել է և «Բազմավէպ»-ում:
Քաղելով այս տեղեկութիւնները,
թողնում ենք հանգուցեալի գրական
գործունէութեան քննութիւնը մի
այլ անգամի:

«Գուրան», լուծուար: Այս վեր-
նագրով Պարիզում ամսէ ամիս հրա-
տարակուելու է պ. Գարեգին Մե-
ծատուրեանի տնօրինութեամբ «Հո-
ղագործական, գիտական և արուես-
տական» հանդէս, պատկերներով
«Գութանի»—անպատակն է արթըն-
ցնել և տարածել մեր ժողովրդին
մէջ հողագործութեան և արուեստ-
ներու ճաշակը, ըլլալ գործնակա-
նի ժողովրդային դպրոց մը, մատ-
նանիշ ընել մշակութեանց լաւա-
գոյն եղանակը, գիտական նորու-
թիւնները և արուեստներու հսկայ
լառաջադիմութիւնը: Առաջին հա-
մարը, որ բաղկացած է ընդամենը 16
երեսից, ունի հետեւեալ բովանդա-

կույթները. «Հողը», «Երկրմայր» (անձրևալին ճիճու), «Կաթնտու և կարագատու կովերը ճանչնալ», «Վե՛րջերու կողելը», «Արօր» (նրա ծագումը, պաշտօնը, կազմութիւնը, տեսակները, աշխատութիւնը), «Եր-նոջ և կովի կաթը», «Գինին յտա-կող նիւթերը», «Երկրագործի ամ-ացացը», Մեզ թուով է որ տարե-կան բաժնեգինը՝ 6 ուրբի, շատ թանգ է և կարող է արգելք լինել մեր երկրագործ ժողովրդի մէջ հան-դիսի տարածուելուն: Բովանդակու-թեան մասին մեր կարծիքը կը լայտենք, երբ լոյս կը տեսնեն մի քանի համարներ:

«Մասիս», լուսնուար, փետրու-ար: Այս փոխ (16 երես) շարա-թաթերթը ունի տաճկահայոց թեր-թերի բոլոր բնորոշ կողմերը. շա-տախօտութիւն, գեղեցիկ բառերի և դարձուածների տարափի հետ և բովանդակութեան ջրալիութիւն: Մենք ուսանայելիս սիրում ենք աւելի խտացած գրուածքներ և ա-ւելի ուշք ենք դարձնում բովանդա-կութեան ճոխութեան, քան արտա-քին պաճուածանքների վրայ: Սակայն արդար լինելու համար, չը պէտք է մոռանաք, որ թիւրքահայ գրա-գէտները ստիպուած են յարմարուել թիւրքական բեժիմին, որ մտա-վախութեան սոսկալի մի տիպ է: Թիւրքահայ հրտպարակասօւր, վի-պասանը իրատունք չունի շօշափել ներքին կեանքի բազմաթիւ կող-մեր. իսկ առանց այդ պայմանի մամուլը, բնականաբար, կորցնում է իր որոշ գոյնը, կենդանութիւնը և ստիպուած է իր բոլոր ուշադրու-թիւնը դարձնել միայն անմեղ ներ-քին խնդիրների վրայ և բաակա-նանալ արաստահմանեան թերթե-րից (դարձեալ անմեղ) քաղուածք-ներ անեղով: Սուլթանախնամ բե-ժիմը խեղդում է մտաւոր ամեն ինքնուրաշխութիւն, աշխոյժ. ուստի

չը պէտք է դարմանալ, որ թիւրքա-հայոց թերթերը ամենից շատ գրա-դուած են հոգևորականների և գրա-գէտների դարմանականներով և կենսագրութիւններով, հիւանդա-նոցների և դպրոցների արտաքին բարեկարգութեան հարցերով և «վարդ, լիւա, կոյսի աչեր», երգելով — թէկուզ այդպիսի երգեր լսելու տրամադրութիւն էլ չունենան նը-րանց ընթերցողները...

«Բանասէր». հանդէս հնախօ-սական, պատմական, լեզուաբանա-կան և քննական, լոյս է տեսնում Պարիզում երեք ամիսը մի անգամ, տարեկան չորս գիրք, տնօրինու-թեամբ պ. Վ. Յ. Բասմալեանի: Հրատարակութեան երկրորդ տա-րուայ Պրակ Գ-ի մէջ տպուած է Արջիպալտ Սէյիի՝ «Բետացիք կամ մի մոռացուած կայսրութեան պատ-մութիւն» անունով ուսումնասիրու-թեան թարգմանութիւնը, որ կատա-րել է պ. Յ. Վ. Յակոբեան: Պրօֆ. Ա. Սէյիի ներկայ գործը ութ գլուխ-ներից է բաղկացած. 1) «Բետացիք» ըստ Ս.-Գրոց. 2) «Բետացիք» ըստ Նոյսիական և Սաուրական արձա-նագրութեանց. 3) «Բետական լիշա-տակարանք. 4) «Բետական Վայս-րութիւնը. 5) «Բետական ցեղը և քաղաքները. 6) «Բետական կրօնն և արուեստագիտութիւնը. 7) «Բետական արձանագրութիւնք. 8) «Բետական վաճառականութիւնն և ճարտարու-եստը: Ճանկաստանի մէջ, Եօզ-դաթից Սանկարլու դնացող ճանա-պարհի վրայ, գտնում են երկու քե-տական մայրաքաղաքների աւերակ-ները. Պողոսքէօյ և Իլիւք կոչուած քաղաքները: Վեսարիպի դաշտի մէջ կայ Գարա-Իլիք մի գիւղ նիլ-դէյի և Բորի կողմերը ևս քետական քաղաքների և գիւղերի աւերակները կան: Գիտականները այդ կող-մերի գիւղացիների մէջ նմանութիւն են գտնում քետական տիպարին:

Աւելի ևս շատ են այդ հին կայսրութեան յիշատակները Նիլիկիայում. հին Մարկաչ, Խիլիբ և Քիսասար այժմ կոչւում են Մարաշ, Հալէպ և Քէսասպ. Մի խօսքով, ամբողջ Փոքր-Ասիայում կան այդ հին կայսրութեան հետքեր. Երեք տարի առաջ պրոֆ. Եէնսէն միտումնասիրութիւն հրատարակեց այդ հին հզօր կայսրութեան մասին, որով աշխատում է ապացուցել թէ Բեսաղիները և ճախաղայներ մի և նոյնն են. այսինքն թէ անհետացած քեռական ազգը այսօրուան հայ ազգն է ներկայացնում: Սէյսը հակառակ է այդ ենթադրութեան: Այս խընդրով հետաքրքրողները կարող են այժմ ծանօթանալ հռչակաւոր գիտնականի կարծիքների հետ, կարդալով նրա գրութեան հայերէն ձիշտ թարգմանութիւնը:

„КАВКАЗСКИЙ ВѢСТНИКЪ“, մարտ. Խօսելով «Մուրճ» ամսագրի մասին պ. Ա. Խատիսեանը ապացուցանում է, որ շատ դէպքում նա տեղեակ չէ այն խնդիրներից, որոնց մասին գրում է. Իր. առաջին տեսութեան մէջ (№ 1), օրինակ, նա պնդում էր, թէ «Հանդէս Ամսօրեայն» գրում է գրաբար և աստուածաբանական յօդուածներ. թէ՛ մէկ և թէ՛ միւս տեղեկութիւնը սխալ է: Այժմ էլ նոյն վստահութեամբ նա ուզում է հաւատացնել, թէ պ. Փ. Վարդանեանը գիտութիւնը ժողովրդականացնող լայտնի գրող է. թէ և մեր գրականութեան մէջ մինչև այժմ պ. Փ. Վ.-ը լայտնի էր միմիայն անմարտ, շինծու գրաբարածէ լեզուով կատարած իր թարգմանութիւններով: Մեր իրականութեան հետ ևս շատ քիչ է ծանօթ երևում պ. Խատիսեանը: Նա գրում է, թէ «Հայ բուրժուազիան բողոքովին չէ կարդում հայերէն, իսկ ինտելիգենցիան քիչ է կարդում» և բացատրում է այդ զլխաւորապէս նրանով, որ իբրև թէ զրանք

«հետաքրքրական նիւթ չեն գտնում» հայոց գրականութեան մէջ և թէ զրանցից շատերը, որոնք մի ժամանակ «կարդում էին Բաֆֆու և Արծրունու գրութեանը, այժմ ոչինչ չեն կարդում»: Այդ էլ սխալ է: Մեր ինտելիգենցիան և բուրժուազիան շատ քիչ են հետաքրքրուել նոյն իսկ այդ երկու նշանաւոր հայ գրողներով: Տարօրինակ է թւում պարոնի կարծիքը. դուրս է դալիս որ երեկուայ դնաղան՝ բախտի բերմամբ այսօր կապիտալիստ դասնալով լանկարձ աշխարհ գարգանում է, որ չէ հաւանում այն մըտաւոր կերակուրը, որով զոհանում են նրանից շատ զարգացած հայ ընթերցողները: Պէտք է ասել որ նոյն իսկ մեր ինտելիգենցիայի մեծամասնութեան ընդհանուր զարգացումը շատ էլ բարձր չէ մեր սովորական ընթերցողների մտաւոր մակերևոյթից. մեր ինտելիգէնաների մեծ մասը զիպլօմաւոր արհեստաւորներ են, զուրկ ընդհանուր և լայն զարգացումից: Դրանց մտաւոր սընունդը մատակարարւում են «Кавказ»-ի նման թերթերի լուրերով: Մեր ինտելիգենցիայի մի մասը չէ կարդում հայերէն, որովհետև չը գիտէ իր մայրենի լեզուն և չէ էլ հետաքրքրւում իր ազգի կեանքով: Սովորել մայրենի լեզուն նա աւելորդ է համարում, քանի որ գործնական լեզու, օգուտ, նա չունի այդ լեզուից: Փող դատել և իր համար կօմֆօրտ ստեղծել—ահա՛ մեր ինտելիգենցիայի մեծամասնութեան իդէալը: Վերցրէք Բագուի և Քիֆլիսի հայ բժիշկների, փաստաբանների, ինժեներների, ագրօնօմների և այլ զիպլօմաւոր այդ արհեստաւորների ցուցակը և փորձեցէք վիճակագրական տեղեկութիւններով պարզել հետեւեալ խնդիրը. քանի՛սն է առհասարակ հետաքրքրւում հասարակական-գրական հարցերով և նոյն իսկ ռուսերէն լուրջ ընթերցանութեամբ

պարապում: Մենք հաստացած ենք, որ ճիշտ թուերը եւ կը ցոյց տան, որ մեղը հայոց մամուլի մէջ չէ... Դատարկ ու փքուն խօսքերով դրանք կը ցանկան դիմակաւորել իրանց մտաւոր ու բարոյական սնանկութիւնը—այդ ճիշտ է: Բայց աւելի, քան մեծ-մեծ «պրետենդիաներ», դրանցից մի՛ սպասէք: Մենք դրանց համարում ենք չորացած և անպտուղ ճիւղեր. հազարապատիկ բարձր է մեզ համար այն ընթերցողը, որ իր սուղ միջոցներից

կոպէկներ է տալիս մայրենի լեզուով մտաւոր սնունդ գտնելու համար...

„Ք. Բ.“ այս համարում ուշադրութեան արժանի է Մ. Ի. Թեվի լօղումը՝ Ստիպում 1653 թուին Դէ-Լարուլէ Լէ-Գուլի կատարած ճանապարհորդութեան մասին: Իբրև ականատես, չիշած Ֆրանսիացին շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում XVII-րդ դարի Թիւրքիայի, Պարսկաստանի, Հայաստանի և Վրաստանի մասին: